

# ԱՆՏԱՐԲԵՐ ՉԵՆՔ ԿՐՆԱՐ ՄԵԶ

Posted on July 25, 2011 by Keghart



Category: [Opinions](#)



Սիմոն Տետեան, Neuchâtel, Չուիցերեայ, 26 Յուլիս 2011Ինչ որ կը պատահի եւ կը գրուի այսօր, վաղը Չուիցերահայերու պատմութիւնը պիտի ըլլայ: Իրականութիւնը գնահատելու համար, այս մէկ երկու տարուան դէպքերուն պատճառները կարելի է տեսնել ասկէ 15 եւ 20 տարիներ առաջ գրութիւններուն մէջ, զետեղուած այս երկտողի վերջաւորութեան:



Սիմոն Տետեան, Neuchâtel, Չուիցերեայ, 26 Յուլիս 2011Ինչ որ կը պատահի եւ կը գրուի այսօր, վաղը Չուիցերահայերու պատմութիւնը պիտի ըլլայ: Իրականութիւնը գնահատելու համար, այս մէկ երկու տարուան դէպքերուն պատճառները կարելի է տեսնել ասկէ 15 եւ 20 տարիներ առաջ գրութիւններուն մէջ, զետեղուած այս երկտողի վերջաւորութեան:



Առաջինը՝ Պէյրութի «Նայիրի» թերթին մէջ 1996-ին հրատարակուած, այսօրուան մերժումին պատճառը կը ներկայացնէ. Իսկ երկրորդը, Պրն. Նազարեթ Սրմաքէշեանի ընդվզումն է Վիգէն Վարդապետին հանդէպ, եւ իր հրաժարումը այդ օրուան եկեղեցական խորհուրդէն:

Ինչ որ սուտերու վրայ հիմնուած է որպէս Fait Accompli՝ ընդունելի չէ. եւ այդ ՆՍՕՏՏ Գարեգին Բ-ը կ'ուզէ օգտագործել իր տիրապետութեան համար: Հակառակ Կաթողիկոսին ղրկուած խնդրագիրներուն եւ տրուած բացատրութիւններուն, ան կը մնայ անդրդուելի եւ մեր եկեղեցական ավանդական օրէնքներուն հակառակ:

Գաղութը իր պայքարը պիտի շարունակէ պաշտպանելու համար եկեղեցւոյ եւ հաւատացեալներուն ավանդական օրէնքները: Կաթողիկոսը պետք է գիտնայ ինքզինքը յարգել, որպէսզի յարգուի: Անտարբեր չենք կրնար մնալ, եւ պետք չէ մնանք:

Կը խնդրենք Ձեր մասնակցութիւնը բերել ներքոյիշեալ խնդրագրին.-

## Սեղմեր [խնդրագիր Չուիցերիոյ Առաքելական Եկեղեցւոյ](#)



XX



